Հավելված
Հայաստանի Հանրապետության
արտաքին գործերի նախարարի
2024 թ. հունիսի 17-ի
թիվ Հր.1640-Լ

ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆԸ ԵՆԹԱԿԱ՝ ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԳՈՐԾՈՂ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԿՆԻՔՆԵՐԻ

1. Սույնով սահմանվում է Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարությանը ենթակա՝ օտարերկրյա պետություններում գործող առանձնացված ստորաբաժանումների (այսուհետ՝ օտարերկրյա պետությունում դիվանագիտական ծառայության մարմիններ) կողմից օգտագործվող պետական կնիքների (այսուհետ՝ կնիք) նկարագրությունը:

2. Կնիքն օգտագործվում է օրենսդրությամբ նախատեսված օտարերկրյա պետությունում դիվանագիտական ծառայության մարմինների լիազորությունները իրականացնելու նպատակով:

3. Կնիքը պետք է լինի կլոր (41.00 մմ տրամագծով): Շրջանի կենտրոնում արտացոլվում է զինանշանը, իսկ շրջանագծի երկայնքով գրվում է ՀՀ արտաքին գործերի նախարարություն անվանումը՝ հայերենով և մեծատառերով, այնուհետև՝ օտարերկրյա պետությունում դիվանագիտական ծառայության մարմնի անվանումը և նստավայր քաղաքի անվանումը՝ հայերենով, անգլերենով, անհրաժեշտության դեպքում զուգակցելով դեսպանը ընկալ պետության պաշտոնական լեզվով: